

Հարգելի պարոն/տիկին,

Թույլ տվեք ներկայացնել Ձեզ <<Ապագան բաց է>> կրթական հասարակական կազմակերպությունը, որը 2004թ.-ից կրթական ծրագրեր է իրականացնում Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում: Մեր գլխավոր նպատակն է՝ բարձրացնել կարիքի մեջ գտնվող երեխաների կրթական մակարդակը:

Մեր մասին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով կազմակերպության ՎԵԲ կայք [www.fio.am](http://www.fio.am) : Այս բոլոր ծրագրերը իրականացնում են 60-ից ավելի հայ երիտասարդ կամավորներ:

Հարգելի պարոն/տիկին,

Այս նամակով, Ձեզ ենք ներկայացնում կազմակերպության <<Նամակագրական կապ>> ծրագիրը, որը պատրաստվում ենք իրականացնել մանկատների, հատուկ դպրոցների և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:

Ս.թ. հոկտեմբերի 1-ից սկսում ենք վերոնշյալ ծրագիրը՝ կապ ստեղծելով անհատների/կազմակերպությունների և կարիքի մեջ գտնվող երեխաների միջև: Այս ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր անհատ/կազմակերպություն կարող է նամակագրական կապ ունենալ մեկ երեխայի հետ՝ աջակցելով նրանց տարբեր խորհուրդներով և քաջալերական խոսքերով: Վստահ ենք, որ յուրաքանչյուրս կարող է իր ուրույն տեղն ու դերը ունենալ փոխելով անգամ մեկ երեխայի կյանք/ապագան: Հավատում ենք, որ երեխաների ապագան բաց է և նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա արժանապատիվ ապագա: Բոլոր երեխաներն էլ ունեն երազանքներ: Երազանքները շատ փոքր են, և մեզնից յուրաքանչյուրը կարող է դառնալ մեկ երեխայի լավագույն ընկերը՝ օգնելով նրան կյանքի կոչել այն:

<<Նամակագրական կապ>> ծրագրի մասին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով [www.penpals.fio.am](http://www.penpals.fio.am) ՎԵԲ կայք:

Ակնկալում ենք Ձեր անկեղծ համագործակցությունը՝ նամակագրական կապի մեջ լինելով մեկ երեխայի հետ:

*Հիշենք, որ նրանք ունեն մեր խորհուրդների և քաջալերական խոսքերի կարիքը: Եվ դա է ուժ տալիս նրանց հասնել և անել ավելին:*

**Հարգանքներով՝**

**<<Նամակագրական կապ>> ծրագրի  
աշխատանքային խումբ**

**<<Ապագան բաց է>> կրթական ՀԿ գրասենյակ  
Հասցե՝ Քաջազնունի 1, 3-րդ հարկ  
Հեռ՝ 55-91-26 (14<sup>00</sup> – 18<sup>00</sup>)  
ՎԵԲ կայք՝ [www.fio.am](http://www.fio.am)  
Էլ. փոստ՝ [info@fio.am](mailto:info@fio.am)**